

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԻՆՍՏԻՏՈՒՏ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԻ

Հարցազրույց Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի նախագահ Ամալյա Կոստանյանի հետ



- Ձեր դիտարկմամբ ինչպիսի՞ ընդդիմություն ունենք և համամի՞տ էք արդյոք այն տեսակետին, որ ընդդիմությունը թուլացած է և կուժեղանա, երբ նրան միանա ՀՅԴ-ն:

- Ես չեմ կիսում այդ տեսակետը, որովհետև ինչ հիմքեր ունենք պնդելու, որ դա միակ ճանապարհն է: Իհարկե, տեսականորեն ցանկալի է, որ ընդհանրապես ընդդիմությունը միավորված լինի, և մենք բոլորս մտածում ենք դրա մասին և կցանկանայինք, որ այդպես լիներ, բայց չեմ կարծում, որ դա միակ ճանապարհն է, առաջինը, քանի որ այն մթնոլորտը, որում ընդդիմությունը կմիանա կամ չի միանա, ընդհանրապես չի նպաստում գործընթացի զարգանալուն, չի նպաստում և այլակարծությանը, և ընդհանրապես քաղաքական ցանկացած պայքարին: Կարծում եմ, որ եթե մթնոլորտը լիներ ավելի բարենպաստ, միգուցե ավելի լավ կլիներ, որ մենք ունենայինք տարբեր և բազմազան ընդդիմություններ: Իհարկե պահանջ կա, որ այն դաշտը, որտեղ ընդդիմադիրներն են, ավելի հզորանա, քանի որ կարծում եմ՝ ցանկացած պետության համար խիստ անհրաժեշտ է հզոր ընդդիմություն ունենալ և խիստ անհրաժեշտ է հզոր քննադատություն ունենալ, և նորմալ, քաղաքակիրթ և լեգիտիմ իշխանությունները պետք է ամեն ինչ անեն, որպեսզի ունենան հզոր ընդդիմություն: Մեզանում պատկերն այլ է. մեր իշխանություններն ամեն ինչ անում են, որ իհարկե չունենանք հզոր ընդդիմություն, օգտագործում են լծակներ և ընդդիմությանը թույլ չեն տալիս օգտագործել այն հնարավորությունները, որ կան քիչ թե շատ նորմալ երկրներում:

- Համաձա՞յն էք արդյոք իշխանության այն տեսակետի հետ, որ ՀԱԿ-ը, հրաժարվելով իր մանդատներից, հիասթափեցրեց իր ընտրագանգվածին:

- Ես համամիտ չեմ, որովհետև իհարկե դա ՀԱԿ-ի որոշումն է, բայց իմ տեսանկյունից, ականատես լինելով 8-րդ ընտրատարածքում ընտրությունների ընթացքին, կարծում եմ, որ եթե այդ ընտրությունների միջոցով որևէ ուժ ստանձնում է իշխանություն, դա արդեն արժեզրկում է այդ պաշտոնները: Այդ տեսանկյունից, կարծում եմ,

արդարացված է:

- Միջազգային դիտորդական առաքելություններն, այնուամենայնիվ, բարձր գնահատեցին, ասացին, որ այս ընտրությունները համապատասխանում են ժողովրդավարական չափանիշներին:

- Ջարմանալի չէ: Այդ պատկերը փաստորեն արդեն երրորդ անգամ է: 2007-ին, 2008-ին և 2009-ին մենք նման գնահատականի ենք “արժանացել”: Եվ եթե 2008-ին նրանց տված այդ գնահատականին, որ հիմնականում համապատասխանում է միջազգային ստանդարտներին, հաջորդում էր բավականին խիստ քննադատություն, այսինքն՝ մանրամասները ցույց են տալիս, որ եղել են խախտումներ, և այդ խախտումներով հանդերձ հնարավոր չէր անվանել այդ ընտրությունները միջազգային ստանդարտներին համապատասխան: Համենայն դեպս, եթե մինչև մարտի 1-ը կարելի էր ինչ-որ չափով արդարացնել, որ միջազգային հանրությունն ուզում է խրախուսել Հայաստանի իշխանություններին՝ շարժվելու դեպի ժողովրդավարություն, մարտի 1-ից հետո և ես չեմ տեսնում ոչ մի առաջընթաց, այլ, ընդհակառակը, ասում են, որ խայտառակ ընտրություններ են եղել, համենայն դեպս 8-րդ ընտրատարածքում, որը մենք դիտարկել ենք: Պարզվում է՝ զուտ քաղաքական պատճառներով է նման հայտարարություն արվում, և դա բացարձակապես արժեզրկում է եվրոպական կառույցներն իմ աչքերում:

- Դուք նշեցիք 8-րդ ընտրական տեղամասը, ՀԱԿ-ը, Ժառանգությունն էլ նշեցին մի քանի այլ տեղամասերում ընտրախախտումներ: Մի խոսքով, առջևում ընտրություններ չեն լինի:

- Երեք տարի համենայն դեպս ընտրություններ չկան: Ես բազմիցս հայտարարել եմ, որ նման ոճի ընտրություններ Հայաստանում անիմաստ է անցկացնել: Ավելի լավ է մենք հրաժարվենք այդ իմիտացիայից և նշանակենք բոլոր պաշտոնները, նշանակենք ոչ թե մենք, այլ նրանք, ովքեր իշխում են, և անիմաստ է իսկապես թատրոնում մասնակցել և որպես դիտորդ, և ընդհանրապես որպես մասնակից, քանի որ ընտրությունները որպես ինստիտուտ պարզապես գոյություն չունեն Հայաստանում:

- Խոսեցիք թատրոնի մասին. այս ընտրությունները ողբերգությո՞ւն էին, կատակերգությո՞ւն, թե՞ դրամա:

- Այս ընտրությունները ողբերգություն էին, որովհետև, ցավոք, այստեղ ես չեմ կարող հումորով վերաբերվել, քանի որ նրանք այնքան ցինիկ էին և այնքան բռնության մենք ականատես դարձանք: Այնքան ցինիկմ կար, որ տարբեր կուսակցությունների սատարողները գրանցվում էին և որպես վստահված անձինք, և որպես դիտորդներ: 29 կազմակերպություն էր գրանցվել, ես դեռ որ մի քանիսի հայտարարությունն եմ լսել, ո՞ւր են, որտե՞ղ են և այն հ/կ-ները, որոնց անվանումից դատելով կասկածում եմ, որ նրանց մոտ կա ընդհանրապես դիտարկումը որպես առաքելություն:

Այնուամենայնիվ, այդ լծակն էլ էր օգտագործվել, և արժեզրկվել էր ընտրություններում դիտորդների դերը, որովհետև դա օգտագործվել էր խախտումներ

իրականացնելու համար: Ընդհանրապես, մեր քաղաքականությունը թատրոն է: Թատրոն է, որ մարդիկ չեն կարողանում գիտակցել, որ անձնական շահերի, ամբիցիաների պատճառով իսկապես դնում են այս երկիրն այնպիսի խոցելի իրավիճակի մեջ, որ չենք կարողանում դիմադրել ճնշումների: Այս տեսանկյունից ողբերգություն է, և մենք բոլորս պարտվել ենք, կարող եմ ասել և իշխանությունները, և ընդդիմությունը, և հասարակությունը, քանի որ և հասարակության մեջ կային մարդիկ, որոնք ընդունել էին այս խաղի կամ այս թատրոնի կանոնները՝ և ընտրակաշառք են վերցրել, և կեղծել են կամ ընդհանրապես աչք են փակել այս ամենի վրա: Կան շատ ավելի ակտիվ մասնակիցներ հանձնաժողովների մակարդակներով, և այն սափրագլուխները խմբերի տեսքով, և կան շատ ավելի բարձր մակարդակի դերակատարներ, որոնք հրահանգն են տվել նման ընտրություններ անցկացնելու: Սա միգուցե ֆարս կարելի է անվանել, եթե դա չլիներ այդքան տխուր: Ես չգիտեմ նույնիսկ ինչ բառ օգտագործել, քանի որ իսկապես մեզ մոտ հույս կար, որ քաղաքակիրթ մեթոդներով կամ համենայն դեպս ընդունված մեթոդներով հնարավոր է ինչ-որ բանի հասնել:

Այսօր կարծում եմ, որ դա վերջին հնարավորությունն էր: Ընդդիմությունը հայտարարում է, որ միայն սահմանադրական մեթոդներով է շարժվելու: Կարելի է հարգել այդ որոշումը, քանի որ ես ինքս բռնությանը դեմ եմ, սակայն դա բավականին երկարատև պայքար է և սա դիրքորոշում է: Այսինքն՝ եթե ընդդիմությունը որոշի, որ դա տարիների պայքար է, և միայն խաղաղ, քաղաքակիրթ ճանապարհով, իրազեկման, մոբիլիզացման, միջոցով: Կարելի է ընդունել նրանց այս որոշումը, և իսկապես կարող է հնարավորություն լինի, բայց, անկեղծ ասած, ես չեմ կարծում, որ այս անբարենպաստ պայմաններում երկարատևը կհաղթի: Դեռ որ տեսնում ենք, որ դրսի գործոնն ամեն ինչ անում է, որ իշխանությունները ստորագրեն Ղարաբաղի հետ կապված փաստաթղթերը և Թուրքիայի հետ հարաբերությունները բարելավվեն: Այսինքն՝ ես դեռ չեմ տեսնում դրսի գործոնը: Ներսում էլ բոլոր ինստիտուտներն այնքան, այդ թվում և լրատվամիջոցներն, այնքան վերահսկելի են, որ այդ հնարավորությունները չեն տրվում: Այսինքն՝ մենք բավականին ճգնաժամային իրավիճակում ենք, բայց երևի շատ կլինի, որ ես ինձ վրա վերցնեմ այն դերը, որ ես կարող եմ կանխատեսել: Ես շատ երջանիկ կլինեմ, եթե ինչ-որ անակնկալի գանք և տեսնենք ինչ-որ բան փոխվել է և հնարավորություն կա, և մենք մեր հավատը վերականգնենք, որ իսկապես քաղաքակիրթ միջոցներով Հայաստանում հնարավոր է ինչ-որ փոփոխություն կատարել: Իսկ որ պետք է փոփոխություն կատարել, ես չեմ կասկածում դրանում:

- Ասում եք փոփոխություն կատարելու մասին, բայց հասարակության մի լայն զանգված չի առողջացել, 5-10 հազար դրամով դեռ երեք տարի հետո էլ է գնալու ընտրության:

- Այո, անշուշտ, բայց մի մոռացեք նաև ահաբեկման գործոնը:

- Դա ավելի՞ սարսափելի է:

- Դա ավելի սարսափելի է, և ինքս տեսնելով, որ մեր դիտորդներին են ահաբեկում, պատկերացրեք՝ ինչպես կարող էին վախենալ շարքային քաղաքացիները, ինչպես

կարող էին ահաբեկել և՛ վստահված անձանց, և հանձնաժողովի անդամներին: Այսինքն, այստեղ ոչ միայն կաշառքն է, այստեղ գործոնների կոմպլեքս է աշխատում, և այդ վախի մթնոլորտը մարտի մեկից հետո շարունակում են սերմանել, խորացել է: Իհարկե պարզ է, որ այդ մթնոլորտում շատ ավելի հեշտ է կեղծել, որովհետև կարելի է տարբեր լծակներ օգտագործել: Եթե մարդիկ՝ հանձնաժողովի անդամները, բավականին անկեղծ ասում էին՝ ես իմ հացի հարցն եմ լուծում, և դիտորդին ասում են, որ եթե դուք ինձ խանգարեք, ձեզ կարող եմ նույնիսկ սպանել, էլ ի՞նչ եք ուզում: Մա ոչ միայն հացի հարց է, ոչ միայն 5000-ի հարց է, մեզանում այսօր որոշիչ գործոնը բռնի ուժն է: Նկատեցիք՝ բավականին պասիվ քարոզարշավ էր, չկային ցուցապաստառներ, և այնպիսի տպավորություն էր, որ պետք էլ չէր: Հիմա հասկանում եմ ինչու էր այդպես, որովհետև ինչու՞ փող ծախսել քարոզարշավի վրա, եթե կարելի է դա անել մեկի գրպանը դնելով, և սպառնալիքներով, և ահաբեկելով, և վարչական լծակներն օգտագործելով: Այսինքն՝ այս անգամ տպավորությունն այնպիսին էր, որ նպատակն էր մարդկանց ասել, որ բացի աղբ հավաքելուց քաղաքապետը ոչ մի ուրիշ գործ չունի:

- ՀՀԿ, երբ խոսում է ընտրախախտումների մասին, ասում է, որ չկա մի երկիր, որտեղ ընտրախախտումներ չգրանցվեն, և համակերպվելու կոչ է անում:

- Հայ ժողովրդի ամենամեծ ողբերգությունը համակերպվելու ունակությունը և ցանկությունն է: Մենք նախորդ դարերի ընթացքում համակերպվում էինք զավթիչների ռեժիմների հետ, հետո համակերպվում էինք սովետական ռեժիմին, այսինքն՝ մենք միշտ համակերպվել ենք: Եթե հասկանալի է մեր՝ այլ երկրներում համակերպվելով ապրելը, ապա, ցավոք սրտի, մենք մեր երկրում ենք համակերպվում: Կարծում եմ՝ համակերպվելը շատ վտանգավոր կոչ է, որովհետև մենք 20 տարի է համակերպվում ենք մեր նորանկախ Հայաստանի պայմաններին, և ոչ մի լավ բան մեր համակերպումից ես չեմ տեսնում: Ընդհակառակը, այո, այսօր շատ նորմալ է, եթե մեկ տարի առաջ մի լրագրող ծեծեին, մեզ համար դա մեծ ողբերգություն էր, այսօր, երբ ամիսը մեկ լրագրող են ծեծում, մենք կարծես թե արդեն ռեակցիա չենք տալիս, որովհետև համակերպվել ենք, ոչ թե որ մենք ընդունում ենք, այլ արդեն դա սովորական է դարձել: Երբ մի խումբ մարդիկ և օրենսդրական, և վարչական, և ուժային մակարդակներով կարգավորում են ցանկացած տիպի որոշումներ, այնքան տխուր պատկեր է, որ համակերպվել սրան, նշանակում է ընդունել, որ մենք ազգ ենք, որը կարիք չունի ո՛չ ժողովրդավարության, ոչ ազատ խոսքի, ոչ մարդու իրավունքների տարրական պաշտպանության: Եթե այդպես է, եկեք խոստովանենք և ֆեոդալ երկիր լինենք և չհավակնենք, որ մենք ժողովրդավար ենք, ազատ տնտեսություն ունենք, որ կլանային հեղինակությունների երկիր ենք, և մեզ պետք չի այս թատրոնը, և ինչու ենք մենք ընդհանարապես ժամանակ, փող, նյարդեր ծախսում, որ ինչ-որ թատնում մասնակցենք: Մենք այնքան ետ ենք գնացել այս տարիների ընթացքում, որ կարծում եմ այս թատրոնն արդեն ծիծաղելի է:

- Երբ խոսում եք կոռուպցիայի մասին, նշում եք, որ մեզ մոտ ամենատարածվածը քաղաքական կոռուպցիան է: Քաղաքական կոռուպցիայից ազատելու ի՞նչ ելքեր կան և առհասարակ կա՞ն:

- Ելքեր միշտ կան: Քաղաքականությունը մաքուր չէ և ոչ մի զարգացած երկրում, բայց

համենայն դեպս ինչ-որ կանոններ կան: Կան դեպքեր, երբ բավականին կոռումպացված իշխանությունները, գիտակցելով՝ ինչ վտանգ է սպառնում իրենց երկրին, հենց իրենց հարստությանը կամ կայունությանը, պարզապես նստում են, մտածում և իրենք են սկսում փորձել համակարգը մաքրել: Անշուշտ զոհեր են տալիս, որովհետև առանց զոհերի անհնարին է մաքրելը: Կա տարբերակ, երբ ռադիկալ փոփոխություն է իշխանությունների շրջանակում, երբ նոր մարդիկ են գալիս, նոր ոճ են բերում, և բնական է, այդ դեպքում պետք է լինեն ինչ-որ զոհեր: Զոհեր ասելով նկատի ունեմ ոչ ֆիզիկապես, այլ պատիժի տեսքով: Առաջինը պետք է պատժել, բարձրացնել կոռումպացված լինելու ռիսկայնությունը: Երկրորդ՝ պետք է կանխարգելել, և երրորդ՝ պետք է այնպես անել, որ մարդիկ հավատան, որ սա իսկապես իմիտացիա չէ, այլ իշխանության դեկին գտնվող առաջնորդը դրսևորում է ցանկություն և կամք, վստահ եմ, որ դրան շատ ավելի հեշտ կհամակերպվի:

ԶՐՈՒՅՑԸ ՎԱՐԵՑ ՍԻՐԱՆՈՒՅՇ ՊԱՊՅԱՆԸ